# ՄԱՅՐ ԱԹՈՌ

## Արարատ ամսագրի յարգելի խմբագրութեան·

*Նորին Սրբութեան Վեհափառ Հայրապետի Դիւանի 19 ամսոյս Թ. 258 գրութեամբ տուցայ ի գործածութիւն Մ. Տաճարի մի Թաւշեկազմ արծաթապատ Աւետարան և մի ճաշու Աւետարան ի մի կազմած, նուիրած Թէլաւի Տ. Գէորգ քահ. Տէր Սարգսեանի կողմից։*

*Յայտնելով արժանապատիւ նուիրատուին իմ շնորհակալիքս, խնդրում եմ յարգելի խմբագրութեանդ այս մասին հրատարակել «Արարատի» մերձակայ համարում։*

15 *մայիսի* 1912։

---

*Բագուարնակ տիկին Եղիսաբէթ Սարգսեանը ի յիշատակ իր թոռան՝ օր. Նունէ Վաչեանցի ուղարկել է նուէր Մայր Տաճարին մի զոյգ մետաղեայ ոսկեզօծ աշտանակներ։*

*Յայտնում եմ յարգելի նուիրատուներին իմ ջերմ շնորհակալիքս նրանց այդ սրտաբուղխ նուէրի համար և օրհնում ցանկանալով առողջ և երկար օրեր։*

21 *ապրիլի* 1912 *ամի*։

Մայր Տաճարի Լուսարարապետ **Ղեւոնդ եպիսկոպոս.**

---

*Հնդկաստանի և Պարսկաստանի առաջնորդ գեր. Սահակ արքեպիսկոպոս Այվատեանը մայիսի 9-ին վերադարձաւ Մայր Աթոռը՝ Նորին Վեհափառութեան օծմանը մասնակցելու համար։ Ճանապարհին Սրբազանը ներկայացել է Նորին Մեծութեան Պարսից Շահին և Խնամակալին, որոնք յայտնել են իրենց հովանաւորութիւնը Պարսկաստանի հայ ժողովրդի վրայ և բարեհաճել են յանձնարարել իրենց համակրանաց հաւաստիքն ու բարևները հաղորդել Նորին Վեհափառութեան ամենայն Հայոց Կաթուղիկոսին։*

*Գեր. Սահակ Սրբազանին յաջողել է առանձին հրամանագրով Նախարարապետից, կաբինետի որոշմամբ, ստանալ Պարսկաստանի հայերի համար իրաւունք, որ իրենց մէջ ծագած վէճերը դատուին ու վճռուին Հայոց առաջնորդների ենթակայ եկեղեցական ժողովներում. սրանց վճիռները, առաջնորդի հաստատութեամբ, պէտք գործադրուեն, ինչպէս պետական դատարանների վճիռները:*

---

*Ս. Էջմիածնի Վեհարանի շինութիւնը Մանթաշեանի հաշուով՝ վերսկսուել է մայիս ամսի սկիզբներից և կանոնաւորապէս շարունակւում է։*

---

*Վերջին տարիներս հետզհետէ զարգանում են աշակերտական այցերը Մայր Աթոռին։ Մայիս ամսին երկու աշակերտական մեծ խմբեր իրենց ուսուցիչներով և աշակերտներով եկան Ս. Էջմիածնի վանքը և շրջակաները տեսնելու. մէկ Հին Նախիջևանի Եմխանայ գիւղի պետական երկդասեան դպրոցի աշակերտները, մեծ մասամբ Աստապատ գիւղացիք. մէկ էլ՝ Իգդիրի քաղաքային դպրոցի աշակերտներ և աշակերտուհիներ։*

---

## ՖՈՆԴ

## ՄԱՏԹԷՈՍ Բ· ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՆՈՒԱՆ»

*Երջանկայիշատակ Տ. Տ. ՄԱՏԹԷՈՍ Բ. Կաթուղիկոսի անուան ֆոնդի օգտին ստացել եմ հետևեալ նուէրներ.*

| | | |
|---|---|---|
| *Տ. Սերովբէ վարդ. Սամուէլեան* | 5 | *րուբլի* |
| *պ. Յակոբ Միքայէլեան* | 10 | » |
| *պ. Դոքտոր Տիգրան Փափազեան* | 5 | » |
| *պ. Թադէոս Փ. Տատուրեան* | 10 | » |
| *պ. Մկրտիչ Պալեանց* | 10 | » |
| *պ. Վահան Թէքէեան* | 10 | » |

*Տ. Մատթէոս ծ. վարդ. Ինճէեան հինգ օսմանեան ոսկի.*

Կարսից. *պ. Զուրաբ Զամբազեանի միջոցով*

| | | |
|---|---|---|
| *պ. Մինաս աւագ քահանայ Տէր Պետրոսեան* | 3 | *րուբլի* |
| *պ. Զուրաբ Զամբազեան* | 5 | » |
| *պ. պ. Եղբ. Բաղդասարեաններ* | 5 | » |

պ. պ. Եղբ. Ասլանեաններ . . . 3 րուբլի
պ. Կար. Խալաթեան . . . 2 »
պ. Երուանդ Բեօսէյեան . . . 1 »
պ. Յակոբ Տէր Կարապետեան . . . 1 »
պ. Աղէքսանդր Զալթիկեան . . . 3 »
պ. Ջուրաբ Վանեցեան . . . 2 »
պ. Նազարէթ Բասենցեան . . . 2 »
պ. պ. Յովհաննջանեաններ . . . 3 »
պ. Արշալոյս Աբամբաշեան . . . 1 »
պ. Կ. Աղէքսանդրեան . . . 1 »
պ. պ. եղբ. Մելիքեանց . . . 2 »
պ. պ. եղբ. Բոստանչեանց . . . 2 »

Ջաւա կղզու Սուրբայեա քաղաքից պ. Հայրապետ Տէր Գ. Յակոբջանեանի ձեռքով

պ. Ա. Մ. Զորաբեան . . . . 100 գիլդր
պ. Աւետում Տէր Գ. Յակոմբեան . . . 500 »
պ. Ներսէս Տէր Գ. Յակոմբեան . . . 500 »
պ. Սամ. Յովակիմեան . . . . 100 »
պ. Գէորգ Տէր Ղ. Աբգար . . . . 100 »
պ. Հայրապետ Տէր Գ. Յակոբջանեան . . 50 »
Տիրուհի Մ. Տէր Գ. Յակոբջանեան . . 50 »

1400 գիլդր

Կամ 116 անգ. ոսկի 6 շիլ. 1 պէնս, որը Թիֆլիզի Առետրական բանկի Երեւանեան ճիւղի միջոցով վաճառուեց և գոյացաւ . . . . . 1096 ր. 92 կ.

Բագուից Արսէն Բալայեանի միջոցով

Մի քանի վաճառականներից
Միսակ Հասան-Ջալալեանի ձեռքով . . 100 րուբլի.
Դաւիթ Աւան-Իւզբաշեան . . . 50 »

Եկատերինոդարից Տ. Արսէն քահանայ Վարդանեանի միջոցով

Ի. և Յ. Աւետեան վաճառատուն . 10 րուբլի
պ. պ. եղբ. Թորոսեան վաճառատուն 25 »
պ. Բ. Վ. Ձերազեան և ընկ. . . 10 »
պ. պ. Եղբ. Բողարսուկեանք . . 10 »
պ. Ա. Արզումանեան և ընկ. . . 3 »
պ. Խ. Խաչատրեան . . . 5 »

Ռաշտից Բժ. Գ. Թաշճեանի ձեռքով

| | | |
|---|---|---|
| պ. Աւետիս Մ. Յորդանանեան . . . | 10 | ղրան. |
| Սարգիս քահանայ Սարգսեան . . . | 10 | » |
| Բժ. Գ. Թաշճեան . . . . . | 10 | » |
| պ. պ. եղբ. Թումանեանք . . . . | 50 | » |
| պ. Ա. Ասլանեան . . . . . | 10 | » |
| պ. Ստեփան Աղամիրզեան . . . . | 10 | » |
| պ. Աւագ Մելիք-Յովսէփեան . . . | 10 | » |
| պ. պ. եղբ. Զարիֆեանք . . . . | 10 | » |

Գումար 120 ղրան.—20 ռուբ.

Տ. Եփրեմ եպիսկոպոսից . . . . . 25 ռուբլի.

Գումար՝ 1440 ռ. 92 կ.
և 5 ոսմ. ոսկի.

Առանձին գրքոյկով
հրատարակած հաշուի համեմատ 4759 ռուբլի 93 կոպ.

Համագումար 6200 ռ. 85 կոպ.
և 5 ոսմ. ոսկի.

Բոլոր յարգելի նուիրատուներին յայտնում եմ խորին շնորհակալութիւն։

Ֆոնդի գումարն ու տոկոսների գործադրութիւնը գտնւում է Ս. Էջմիածնի Գէորգեան Հոգևոր Ճեմարանի Մանկավարժական Խորհրդի հսկողութեան և տնօրէնութեան տակ։

Ֆոնդի տոկոսներով պարբերաբար հրատարակուելու են հայագիտական ուսումնասիրութիւններ։

Տեսուչ Ճեմարանի՝
**Բագրատ վարդապետ.**

1912 Թ. Մայիսի 20.
Ս. Էջմիածին.